ԿԱՐԾԻՔ

Արման Գևորգի Անդրկյանի՝ «Հայ Առաքելական եկեղեցու Իրանի թեմերը (պատմություն և արդիականություն)» Թ. 00. 05 - «Կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ)» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին:

Հայտնի իրողություն է, որ Հայ Առաքելական եկեղեցու պատմության անբաժանելի և բաղկացուցիչ մաս են կազմում հայոց հոգևոր թեմերի ու դրանց համակողմանի ուսումնասիրությունը: Ուստի պատահական չէ, որ հայ եկեղեցին հոգևոր թեմերի միջոցով իր վրա վերցնելով հայապահպանության, օտար պետություն - հայ համայնք հարաբերությունների կարգավորման, կրթության ու լուսավորության տարածման և այլ խնդիրներ կարողացել է դարերի ընթացքում պահպանել հայի ինքնությունը, թույլ չտալով նրան ձուլվել օտարության մեջ: Այս առումով մեծապես կարևորվում է ոչ միայն Հայ Առաքելական եկեղեցու այլև նրա նվիրապետական աթոռների և հոգևոր թեմերի պատմության գրեթե բոլոր ժամանակների գիտատեսական ու գործնական հետազոտումը՝ հատկապես ազգային եկեղեցիական բազմաթիվ փոխհարաբերությունների լուսաբանման և հայ եկեղեցու ազգապահպանման գործառույթների քննության տեսակետից: Այդ հանգամանքներից ելնելով կարևորվում է հայոց հնագույն և ամենաերկարակյաց գաղթօջախներից մեկի պարսկահայ հոգևոր թեմերի դերի ու նշանակության բացահայտումը հայ համայնքի ազգային ու կրոնական նկարագրի պահպանման գործում: Այս իմաստով տույն ատենախոսությունը լրացնում է ոլորտի ուսումնասիրության բացը:

Հեղինակն իր առջև նպատակ է դրել հետազոտել, ճշտել, հստակեցնել և վերհանել Իրանահայ հոգևոր թեմերի պատմության մինչ այժմ հրապարակի վրա եղած ոչ պատշաճ լուսաբանված կամ թերի ուսումնասիրված հարցերը հայերեն ձեռագրերի հիշատակարաններում և հայոց հայրապետների դիվաններում պահվող փաստաթղթերի լուսաբանման միջոցով: Նրա առջև դրված խնդիրներից է պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ վեր հանել և համակողմանիորեն քննական ամբողջական վերլուծության ենթարկել Հայ Առաքելական եկեղեցու Իրանի

թեմերի գործունեության դրսևորման հոգևոր-կրոնական հիմքերը, դրանց վրա ազդեցության միտումները, գործոններն ու դրսևորումները: 121 համակարգչային էջեր ընդգրկող ատենախոսությունն ունի կուռ կառուցվածք, բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության ցանկից:

Ներածության մեջ (էջ 3-13) հիմնավորված է թեմայի գիտական նշանակությունն ու արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ներկայացված է աշխատանքի գիտական նորույթը, մեթոդաբանական հիմքը, կիրառական նշանակությունը, տրված է օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության տեսությունը:

Առաջին գլուխը, որն անվանվում է՝ **«Հայ Առաքելական եկեղեցու իրանահայ թեմերը միջնադարում և նոր ժամանակներում (պատմական ակնարկ)»** բաղկացած է հինգ ենթագլուխներից և ընդգրկում է 14-51 էջերը: Այստեղ հեղինակը հետազոտության նյութ դարձնելով Ս. Թադեի, Նոր Ջուղայի վանական թեմերի, Զարեհավան - Մալմաստի, Հերի, Զարեվանի, Առնայի եպիսկոպոսությունների գործունեությունը, ներկայացրել է Հայ Առաքելական եկեղեցու Իրանի թեմերի կազմավորման աստիճանականությունը՝ տալով Իրանի տարածքում V-XVIII-դդ հայկական գաղթօջախների ձևավորման նախապատմությունը: Այս գլխում նա անդրադարձ է կատարում նաև Հայ Առաքելական եկեղեցու Իրանի թեմի ձևավորման և զարգացման պատմությանը, մեջ բերելով իրանահայ հոգևոր թեմերի, սրբերի, այդ թվում Ավագ Սալմաստեցու, Իսահակ Թավրիզեցու, Միրաք Թավրիզեցու, Գրիգոր Արվայեցու մասին պատմող տեղեկությունները (տե՛ս էջ 20-33): Հեղինակին հաջողվել է համապատասխան փաստերի բնական վերլուծությամբ ներկայացնել Նոր Ջուղայի և Ատրպատականի հոգևոր թեմերի գործունեությունը XVIII դարում և նրանց փոխհարաբերությունները Սբ. Էջմիածնի հետ: Այստեղ նա քննության է ենթարկել հայոց հայրապետների՝ Ղազար Ա Ջահկեցու, Հակոբ Ե Շամախեցու, Սիմեոն Երևանցու և Ղուկաս Կարնեցու ջանքերը պարսկահայության կրոնա-իրավական կարգավիճակի բարելավման գործում: Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսի «Հիշատակարանի» նյութերի և «Ջամբռ» աշխատության քննական վերլուծությամբ Անդրիկյանը հատուկ ընդգծել է Սիմեոն Երևանցու իրականացրած մեծ

դերակատարությունը իրանահայ երկու թեմերի Ատրպատականի և Նոր Ջուղայի (իրանահնդկական) էջմիածնի նվիրակների նշանակման և իրավական կարգավորման հարցերում (տե՛ս էջ 34-41):

Առաջին գլխի վերջում (էջ 49-51) հեղինակը ժամանակագրական հերթականությամբ ներկայացրել է 1606-1800 թթ. ընկած ժամանակատվածում Նոր Ջուղայի թեմի առաջնորդների՝ Մեսրոպ եպ. Ջուղայեցու, Խաչատուր Կեսարացու, Դավիթ Ա, Ստեփանոս, Ալեքսանդր, Մովսես Ա, Դավիթ Բ, Պողոս Ջուղայեցիների և Գևորգ, Մկրտիչ, Հակոբ եպիսկոպոսների գործունեությանը, նրանցից առանձնացնելով և կարևորելով թեմի և զաղութի կյանքում մեծ ներդրում ունեցող՝ Խաչատուր Կեսարացուն և Ստեփանոս ու Ալեքսանդր Ջուղայեցիներին:

Ատենախոսության երկրորդ գլուխը, որը կրում է «Իրանահայ հոգևոր թեմերը XIX-XX դարերում» վերնագիրը, ընդգրկում է 52-81 էջերը և բաղկացած է յոթ ենթագլուխներից: Այստեղ համապատասխան փաստերի վերլուծությամբ հեղինակը քննության է ենթարկել իրանահայ երկու թեմերի՝ Ատրպատականի (Թավրիզ) և Նոր Ջուղայի (իրանահնդկական) գործունեությունը Ֆաթհ Ալի Շահ Ղաջարի և Նասրեդդին շահերի օրոք: Հայտնի է, որ «այդ թեմերը հանդիսանում էին պարսկահայ համայնքի իրավական դրության երաշխավորներն ու պետության հետ հայ համայնքների իրավա-քաղաքական հարաբերությունների կարգավորողները», - ինչպես ընդգծում է ատենախոսը (տե՛ս էջ 53): Այս կարևոր հանգամանքները նկատի ունենալով նա հանգամանորեն անդրադարձել է Ատրպատականի թեմի առաջնորդ Գևորգ եպս. Վեհապետյանի և Նոր Ջուղայի թեմական առաջնորդ Թադեվոս եպս. Բենազարյանի պայքարին՝ պարսկահայության իրավաքաղաքական և կրոնական ազատությունների ձեռք բերման ուղղությամբ: Համապատասխան նյութերի վերլուծությամբ հեղինակին հաջողվել է ցույց տալ նաև Ատրպատականի թեմական առաջնորդ Ներսես եպս. Մելիք-Թանգյանի հայրենանվեր գործունեությունն ու վաստակը և ամենայն մանրամասնությամբ ներկայացրել XIX- XX դդ. իրանահայ առաջնորդների ցանկը՝ տալով նրանցից ամենաչքի ընկածների համառոտ բնութագրերը (տե՛ս էջ 72-74): Հեղինակը առանձին անդրադարձ է կատարել նաև Ատրպատականի, Իրանահնդկական և Թեհրանի հոգևոր թեմերի՝ կառավարման ավանդական համակարգին և նրանց փոխհարաբերություններին իրանական

պետության հետ XX դարի և իրանահայ թեմերի՝ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնից հեռանալու հանգամանքներին (տե՛ս էջ 74-81):

Ատենախոսության երրորդ գլուխը վերնագրված է՝ **«Իրանահայ հոգևոր թեմերի գիտակրթական և մշակութային գործունեությունը»** և բաղկացած է չորս ենթագլուխներից, ընդգրկելով է 82-108 էջերը: Այս վերջին գլխում ատենախոսին հաջողվել է համալիր քննությամբ ներկայացնել XIV-XV դդ թվագրվող շուրջ 120 հայերեն ձեռագիր հիշատակարաններում պահպանված տեղեկություններն իրանահայ թեմերի կամ եպիսկոպոսական վիճակների ու գրչության կենտրոնների մասին: Ինչպես հեղինակն է ճիշտ նկատել «դրանց թեմտիկան բազմազան է և ընդգրում է ոչ միայն Աստվածաշունչ Մատյանը, Ավետարանը, Առաքյալների և դավանաբանական թղթերը այլև Ճառընտիրը, մեկնությունները, ժողովածուները, Հայսմավուրքները և գրական ստեղծագործությունները» (տե՛ս էջ 88, 91, 92):

Ատենախոսին հաջողվել է նոր փաստերի քննությամբ արժևորել և վերաիմաստավորել իրանահայ թեմերի ենթակայության տակ գտնվող մի շարք հայկական բնակավայրերի՝ Սուլթանիեի, Ս. Թադեի վանքի, Թավրիզի, Նոր Ջուղայի գրչության կենտրոնների և այնտեղ գործունեություն ծավալած բազում գրիչների (Մխիթար Անեցի գրիչի, Գրիգորի՝ Սարգիս քորեպիսկոպոս, Բարսեղ երեցի, Ավազի, Թումայի, Կարապետի, Աբրահամ եպիսկոպոսի, Մըսրի, Ստեփանոս եպս. Առնջեցու Տիրավազի և այլոց) ծավալած կրթա-մշակութային գործունեությունը: Այստեղ հեղինակին հաջողվել է վեր հանել գրչության կենտրոնների և մատյանների ընդօրինակման հովանավորների խաղացած դերը և իրանահայ գրչության կենտրոնների կապը մայր հայրենիքի ու Կիլիկիայի հայկական թագավորության նշանավոր գիտակրթական օջախների (Գլաձոր. Մեծոփավանք) և դրանց ռարունապետերի (Եսայի Նչեցի, Ներսես Մշեցի, Գրիգոր Տաթևացի) հետ (տե՛ս էջ 91): Համապատասխան փաստերի քննությամբ և մեկնաբանմամբ Ա. Անդրիկյանը փորձ է արել կարևորել Պարսկաստանի հայաբնակ 497 բնակավայրերից 312-ում կառուցված 385 եկեղեցիներից նշանավոր 6 վանքերի, վանական համալիրների և եկեղեցիների, մասնավորապես Ատրպատականի Դերիկի Ս. Աստվածածին, Ս. Ստեփանոս նախավկա, Ս. Թադեի, Նոր Ջուղայի՝ Ս. Ամենափրկիչ, Ս. Կատարինե և Փերիա գավառի Հազարջրիք գյուղի Ս. Աստվածածին եկեղեցիների դերն ու

նշանակությունը ոչ միայն իրանահայ թեմերի հոգևոր իշխանության սահմաններում, այլև ընդհանրապես Հայ Առաքելական եկեղեցու պատմության մեջ: Այս գլխում հեղինակին հաջողվել է համակողմանի քննության ենթարկել իրանահայ հոգևոր դասը ներկայացնող եկեղեցական ու մշակութային քիչ հայտնի ականավոր գործիչներից մի քանիսի՝ Խաչատուր վրդ. Կեսարացու, Հովհաննես վրդ. Մլքուզ-Ջուղայեցու, Խաչատուր աբեղա Իսահակյան-Ջուղայեցու, Ստեփանոս երեց Տերտերյան-Հազարջրիպեցու գործունեությունը և արժևորել այն (տե՛ս էջ 99-105): Գլխի վերջում ատենախոսը բովանդակային քննարկման է ենթարկել Իրանի հայ Կաթողիկե և ավետարանական համայնքները (տե՛ս էջ 105-108): Այստեղ նա համապատասխան փաստերի մեկնաբանմամբ լուսաբանել է ոչ միայն Իրանի հայ Կաթողիկե՝ 2200 հոգանոց համայնքի պատմության դրվագները, որի առաջնորդանիստը գտնվում էր Սպահանում և որի հոգևոր հովվության սահմաններում էին գտնվում Թեհրան, Սպահան, Թավրիզ ու Շիրազ քաղաքները այլև հայ ավետարանական 1900 հոգանոց համայնքի և հայ ուղղափառների, ունիթորների ու հոգեզալստականների գործունեությունը:

«Եզրակացություններ» բաժնում ատենախոսը չորս էջերի շրջանակում կատարել է ընդհանրացումներ, ամփոփելով հետազոտության արդյունքները, հանգել է մի շարք կարևոր եզրակացությունների: Եզրակացությունները մեծամասամբ համուգիչ են ու տրամաբանական: Վերջում 9 էջերով ներկայացված է հայ և օտարալեզու գրականություններն, այդ թվում՝ Աստվածաշունչ մատյանը, պատմիչների աշխատությունները, ձեռագիր հիշատակարանները, կաթողիկոսական դիվանի փաստաթղթերը, ուղեգրությունները, աստվածաբանական և վարքագրության փաստաթղթերն ու աշխատասիրությունները, գրքերը, գիտական հոդվածներն ու բառարանները:

Այսպիսով վերլուծելով ատենախոսի կատարած աշխատանքը կարելի է եզրակացնել, որ կատարվել է մեծածավալ ու բարդախիտ աշխատանք, որն ունի հարուստ բովանդակություն, շարադրված է գրագետ լեզվով, պարունակում է գիտական նորույթ: Բարձր գնահատելով կատարված այս դրվատելի գիտական աշխատանքը հարկ ենք համարում նշել որ, ատենախոսությունում տեղ են գտել մի քանի բացթողումներ ու թերություններ, որոնց կուզևայինք անդրադառնալ.

1. Հեղինակը ատենախոսության երրորդ գլխի 3.1.՝ «Իրանահայ հոգևոր թեմերի գրչության կենտրոնները» ենթագլխում հանգամանորեն ներկայացրել է Ս. Թադեի վանքի, Խոյի, Մակուի, Թավրիզի, Սուլթանիեի, Նոր Ջուղայի գրչության կենտրոնների դերն ու նշանակությունը համահայկական իրականության մեջ: Ցանկալի կլիներ, որպեսզի նրա ուշադրությունից չվրիպեր նաև Օրծորի գրչության նշանավոր կենտրոնի լուսաբանումը:
2. Հեղինակն ատենախոսության այս, կամ այն գիտական փաստարկը հիմնավորելու համար հաճախ մեջբերում է իր այս կամ այն հոդվածը, որը սկզբունքորեն և գիտական էթիկայի տեսանկյունից նպատակահարմար չէ:
3. Աշխատանքում տեղ են գտել փաստերի որոշակի անճշտություններ: Այսպես, ատենախոսը աշխատանքի առաջին գլխի 1.1. ենթագլխում (էջ 14) իրավացիորեն նշում է, որ հայերի զանգվածային բռնագաղթը դեպի պարսկաստան կապվում է Սասանյան Արտաշիր թագավորի անվան հետ, ով 228 թ. մեծ քանակությամբ գերիներ տարավ Հայաստանից: Սակայն եզրակացությունների մեջ (էջ 109) սխալմամբ ընդհանրացնում է, որ հայերի զանգվածային բռնի տեղափոխումը Իրանի տարածք կապված է 369 թ. իրադարձությունների հետ:
4. Ատենախոսության առանձին ենթագլուխներում (հատկապես առաջին գլխի առաջին և երկրորդ ենթագլուխներում) ավելի շատ գերակշռում է նկարագրական կողմը, որն աշխատության այդ մասին հաղորդում է փաստագրական բնույթ: Չնայած մյուս ենթագլուխներում վերլուծական կողմը գերակշռում է, ցանկալի կլիներ, որ այդ նույնը լիներ նաև նշված ենթագլուխներում:
5. Ատենախոսության լիարժեքությունն ապահովելու և այն ընդհանրացված դարձնելու համար ցանկալի կլիներ, որպեսզի ատենախոսության գլուխներն ավարտվեին յուրաքանչյուր գլուխն ամփոփող եզրակացություններով, որոնք պետք է նշվեն կետերով, ինչպես գլուխների վերջում, այնպես էլ եզրակացության բաժնում, որպեսզի ավելի պարզ ու հասկանալի լինի ընթերցողին:

Առանձին էջերում (էջ 11, 20, 32, 47, 66, 69, 75, 83, 88, 89, 101 և այլն) կան համակարգչային թերություններ. լեզվաոճային ոչ ճիշտ ձևակերպումներ, անհարթ մտքեր ու արտահայտություններ, որոնք տեխնիկական բնույթի թերություններ են:

Նշված թերություններն, ինչ խոսք, չեն նսեմացնում Ա. Անդրիկյանի գիտական ուսումնասիրության արժանիքները:

Քննարկման ներկայացված ատենախոսությունը հետաքրքիր և բազմակողմանի ուսումնասիրություն է: Այն վկայում է հեղինակի կողմից բավականին բարդ հարցերին ինքնուրույն լուծումներ գտնելու հմտության մասին:

Ատենախոսությունը լիովին բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող բոլոր պահանջներին, ունի գիտագործնական արժեք, իսկ հեղինակը՝ Արման Գևորգի Անդրիկյանը լիովին արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

պ. գ. դ. պրոֆեսոր Էդիկ Գարեգինի Մինասյան

պ. գ. դ. պրոֆեսոր Է. Գ. Մինասյանի ստորագրությունը [illegible]ում եմ

ԵՊՀ գիտական քարտուղար

պ. գ. թ., դոցենտ Լևոն Սահակի Հովսեփյան

09. 07. 2021թ.